Արձանագրություն N 2

ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար «ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/84» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 21.11.2018 թ. ժամը 10:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Սողոմոնյան - Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աշխատակազմի գնումների համակարգման հարցերով փորձագետ

Անդամներ՝

Կ. Սիմոնյան - ՀՀ մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բաժնի գլխավոր մասնագետ

Հ. Վանյան - ՀՀ մշակույթի նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության գլխավոր մասնագետ

Լ. Ներսեսյան - ՀՀ մշակույթի նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Բացակա անդամ՝

Կ. Հակոբյան - ՀՀ մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Երևանի տարածքային բաժնի գլխավոր մասնագետ

Քարտուղար՝

Ն. Կարապետյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի գնումների համակարգման հարցերով փորձագետ:

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

(Ա. Սողոմոնյան)

Ընդունել ի գիտություն, որ.

«ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/84» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացումը կատարվել է «armeps.am» համակարգի միջոցով՝ սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ օրը ժամը 10:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք, ՀՀ մշակույթի նախարարություն, 6-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և էլեկտրոնային հասցեների մասին

(Ս. Սողոմոնյան)

«ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/84» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգին հայտ էին ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1	«Շինկենտրոն» ՓԲԸ	էլեկտրոնային փոստ՝ shinkentron@gmail.com
2	«ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ	էլեկտրոնային փոստ՝ taron.virabyan@mail.ru

3	«ՍԵՆ-ԼԵՎ» ՍՊԸ	էլեկտրոնային փոստ՝ senlev2011@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

(Ս. Սողոմոնյան)

3.1 Մասնակից՝ «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ի «armeps.am» էլեկտրոնային համակարգ մուտքագրած հայտերում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա են և կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3.2 Մասնակիցներ՝ «ՍԵՆ-ԼԵՎ» ՍՊԸ-ի և «Շինկենտրոն» ՓԲԸ-ի հայտերում բացակայում են հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

(Ա. Սողոմոնյան)

«ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/84» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկած գները ներկայացվում են ստորև.

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Սբ Ամենափրկիչ եկեղեցու 2018 թ. կատարվելիք նորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ			
Նախահաշվային գին	**Մասնակցի անվանումը**		**Առաջարկված գինը ՀՀ դրամով**
			Առանց ԱԱՀ
590 800	1	«Շինկենտրոն» ՓԲԸ	140000
	2	«ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ	240000
	3	«ՍԵՆ-ԼԵՎ» ՍՊԸ	265000

Հանձնաժողովը որոշեց.

4.1 Մասնակիցներ՝ «ՍԵՆ-ԼԵՎ» ՍՊԸ-ի և «Շինկենտրոն» ՓԲԸ-ին էլեկտրոնային եղանակով ծանուցում ուղարկել առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել սույն արձանագրության 3.2 կետում նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

* * *

22.11.2018թ.

Ընդունել ի գիտություն, որ մասնակիցներ՝ «ՍԵՆ-ԼԵՎ» ՍՊԸ-ի և «Շինկենտրոն» ՓԲԸ-ի կողմից հրավերի սահմանված պահանջներին անհամապատասխանությունները շտկվել են:

Հանձնաժողովը որոշեց.

4.2 Մասնակիցներ՝ «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ», «ՍԵՆ-ԼԵՎ» ՍՊԸ-ների և «Շինկենտրոն» ՓԲԸ-ի հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4.3 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Շինկենտրոն» ՓԲԸ-ին, որպես բավարար գնահատված և ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4.4 Հիմք ընդունելով "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա.Սողոմոնյան)

«ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/84» ծածկագրով ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության տրամադրման հաջորդող 2-րդ աշխատանքային օրը ժամը՝ 10:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական շենք 2-րդ, 6-րդ հարկ ՀՀ մշակույթի նախարարություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Սողոմոնյան
Անդամներ՝		Կ. Սիմոնյան
		Հ. Վանյան
		Լ. Ներսեսյան
Քարտուղար՝		Ն. Կարապետյան